ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 120-Ա

<<26>> սեպտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.29973 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ մասերի 3-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշմամբ սահմանված <<Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերի>> 1-ին կետի 14-րդ ենթակետը և հաշվի առնելով, որ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, հմայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 0.29973 հեկտար հողամասը շրջապատված լինելով վարելահողերով և խոր ձորակով գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար չի օգտագործվում, ընդառաջելով Անիի համայնքապետարան ստացված քաղաքացու դիմումին՝ գյուղատնտեսական արտադրական նշանակության խելացի խոզաբուծարան կառուցելու համար հողամաս հատկացնելու վերաբերյալ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, հմայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 0.29973 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն, այդ հողամասում քաղաքացու կողմից գյուղատնտեսական արտադրական նշանակության խելացի խոզաբուծարան կառուցելու նպատակով հողամասը օրենքով սահմանված կարգով օտարելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

1) Հողամասի նպատակային նշանկության սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը արտացոլել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և համայքի 2025 թվականի հողային հաշվեկշիռներում:

3. Սույն որոշմամբ նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխությամբ պայմանավորված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	դեմ՝ 0	ձեռնպահ՝ 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	_____	_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	_____	_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ	_____	_____	_____
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	_____	_____	_____
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԵՆՈՔՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	_____	_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<26>> սեպտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ